ՇԱԲԱԹ 9 ՓԵՏՐՎԱՐԻ 1880 — ՇԱԲԱԹ 9 ՓԵՏՐՎԱՐԻ

№ 10 ՓԱՍՆԵԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 10

ԾԱԾՏԱԲԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՒԵՐԻ Վ.ՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ։

ԾԱԾՏԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆՆԵՐՈՎ։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹՈՐ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԶՈՐԵՒԵՑԱԾ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕԳԱՐԱԿԱՑԱԿ. ԴԻՏՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ԽԸ ՐԵԴ. ԳԱԶԵԹԻ „ՊՉԵԼԱ ԱՐՄԵՆԻԱ“ Գ. ԹՈՓՃԵԱՆՑ.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրալուր.—Թագաւոր Կայսեր կենաց դէմ դաւադրութիւնը.—Ջաւախեթցու Թղթակցութեան առթիւ։
Ազգային.—Թղթակցութիւն Կ. Պոլսից.—Արհեստաւորաց ուսումնարան։
Մանր լուրեր։
Յայտարարութիւններ։
Ֆելիէտօն.—Աւիկ և ապաւիկ։

ԹԻՖԼԻՋ 9 ՓԵՏՐՎԱՐԻ 1880 Թ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

„Պրավիտելստվեննիյ Վեստնիկ“ը հաղորդում է, որ ամսոյս 5-ին եօթներորդ ժամին կէսօրից յետ Ձմեռային պալատի ստորին յարկում, գլխաւոր պահականոցի տակը, եղաւ ականի պայթումն։ Սպանվեցան 8 և վիրաւորվեցան 45 հասարակ զինուորներ թիկնապահ ֆինլանդական գնդից։ Վնասված է պահականոցի յատակն և գազի մի քանի խողովակներ, սկսել են ոչնչել պայմանի պատճառները։

Ինչպէս ընթերցողը կ'տեսնէ հեռագրալուրից կրկին մի նոր վտանգ սպառնալիս է եղել Նորին Կայսերական Մեծութեան թանգագին կեանքին։ Կրկին չարագործութիւնը կամեցել է 80 միլիոն ժողովրդին զրկել այն Անձնից, որ նոցա բարերար հանդիսացաւ իւր թագաւորութեան ժամանակ արած մեծամեծ և նշանաւոր բարենորոգութիւններով և ըստ արկաց ազատութեամբ։ Այդպիսի չարագործութեան փորձերն ընդհանուկ են միայն զզուանք և արհամարանք յարուցանելու ժողովրդոց մէջ դէպի չարագործներն և նոցա դիտաւորութիւնն և աւելի սէր և համակրութիւն դէպի իրանց սիրելի թագաւոր Կայսրը։ Ի՞զուր են բոլոր չանքերը չարագործների. մի՞թէ չհասկացան, որ կայսրի գաղտնի աւելի մեծ ոյժ քան իրանց որոգայթները— այն է Նախախնամութեան ձեռքն, որ ամեն ձեռաց գործերը ոչընչացնում է, եթէ նորա չարեն և պահպանում այն թանգագին կեանքը Կայսեր, որ ամենեցուն բարօրութեան անհրաժեշտ է։ Մի՞թէ չպէտք է համոզվել, թէ նա, որ իւր կայսերութեան միջոցին այնքան բարերարութիւնք արաւ իւր հպատակներին, չէ ղանալու նորա և այլ պիտոյքների վերայ հոգալ, և թէ հանգամանքներն ու ժողովրդի վիճակն այդ կ'պահանջեն։ Նախախնամութիւնը միշտ կ'պահպանէ իւր Օծեալի կեանքը, մինչև Սա կարող լինի իւր նշանակութիւնն և իւր թանգագին կեանքի նպատակը իրագործել։

Պէտք է հաւատալ և յուսալ։

Մեզ հաղորդում են Ախալքալաքից, որ „Մեղու“ երրորդ համարում հրատարակած ջաւախեթցու թղթակցութիւնը զանազան մեկնութեանց և ոմանց վրդովմանց առիթ է տուած։ Թղթակցութեան մէջ շօշափած էր դպրոցների մէջ գործողանձանց ոմանց գործունէութիւնն և հէնց սոքա շատ դժգոհ մնացել են և վըրդովել։ Այս անձինք ձգտում են իմանալ թղթակցի ո՞վ լինելը։ Հասարակական ասպարիզում գործող անձինք չպէտք է այդպէս դիւրագրգիռ լինին, — իմանան, որ որքան էլ իրանք քննութեան ենթարկվին յարգելի են իբրև հասարակաց շահերին ծառայող։ Բայց այսպիսիք առանց կոնտրոլի կարող են կորցնել իրանց արժանութիւնն գործունէութեան մէջ, որ նրանց անպէտկանութիւնը չէ։ Եթէ հասարակական գործակատարը պարտաւոր է, ինչպէս իրանը չէ, այլ հասարակութիւնն է և դորա համար է, որ նորա գործունէութիւնն աւելի ենթարկված է հրապարակական հսկողութեան քան մի մասնաւոր անձինը։ Մասնաւոր մարդիկ շատ կան, որ գիշերները լուսացնում են թղթախաղութեան մէջ— վատ են անում, միայն դորա ինձան առաւել իրանց է վերաբերում. բայց այդպէս չէ հասարական գործակատարի վիճակը։ Եթէ խմբագիրն անձնասուր լինի թղթախաղութեան — պարզ է, որ նա իւր լրագրին, որ հասարակաց բերան է, հասարակաց շահերի պաշտպանն է, հասարակաց դասախարակ է, չէ նուիրում բոլոր ոյժը, որով և լրագիրը չէ կարող այն ծառայութիւնն անել, որ պարտական էր գործ դնելու յօգուտ հասարակութեանց։ Մի՞թէ կարելի է այսպիսի խմբագրի թերութիւնն, որի հետևանքը հասարակաց ինձան է, քննութեան չենթարկել և չպախարակել — և պ. խմբագիրը չունի իրաւունք նեղանալու, որովհետև պարտազանց է, մի՞թէ իրաւացի է պարոք չվճարելը։ Դըպրոցի անսուէ է — եթէ սա անձնասուր լինի թղթախաղութեան կամ որ և է այլ մոլութեան այնպէս, որ գիշերներն անքուն անցկացնի — ի՞նչ պէտք է լինի միւս օր նորա հսկողութիւնն ու աշխատանքը դպրոցի

ՖԵԼԻԷՏՕՆ

ԱՒԻԿ ԵՒ ԱՊԱՒԻԿ

Ցայսնի բան է, ընթերցող, որ դու չգիտես թէ ես ինչ եմ մտածում, բայց ես գիտեմ քո մտածածդ իմ մասին։ Դու «Մեղուն» ստանալիս անչուշտ մըտածում ես թէ ջաղջին պատրաստում է քեզ համար ֆելիէտօն և իւր ղարդն էլ հէնց այդ է։

Ղորդ է ղարդս այդ չէ. բայց դառել է, որովհետև ջաղջի եմ — առուտուր չունիմ, թանգութիւն է, ընտանեկան և հասարակական ցաւեր ու վիշտեր անթիւ — այնպէս, որ ես էլ պլուխս դոցա մասին մտածելից ազատելու համար, ժամանակս սպանելու համար — քեզ համար ֆելիէտօն գրելը ինձ համար դարդ ու պարապմունք եմ արել և յիրաւի չատ էլ թեթևացնում է դա իմ գործս, ժամանակը անցնում է առանց հոգսերի և ծախսերի — համ ախորժելի, որովհետև քեզ բաւականութիւն եմ տալիս — համ օգտաւէտ կերպով, որովհետև ֆելիէտօն գրելու համար երբեմն կլուրից եմ յետ մնում, երբեմն թղթախաղից, երբեմն էլ թատրոնից — դրա բոլորն էլ իմ գրպանիս համար մեծ նշանակութիւն ունին — աւելի քան Գերմանիայի առած հինգ միլիարդն, որ ոչինչ արդիւնք չտուեց նորան և այսօր էլ նա փողի կարօտութիւն ունի, որովհետև իւր ձգտումների մէջ չափ չունի։ Մտածում եմ ինչ պլեմ.— իրաւ է նիւթ չատ է, բայց կան բաներ, որոնց մասին գրել չես ուզում։ Մէջտեղում ֆելիէտօնի ժամանակը մօտենում է, ընթերցողը սպասում է. խմբագիրն էլ զօռ է՞անում և պահանջում։ Մէկը գըրեցի չթողին, միւսը գրեցի Ընչեցին — Երրորդը բանտարկեցին, իսկ չորրորդը խարոյկի դատապարտեցին։ Դիտես, ընթերցող, «Մեղուի» խմբագիրը զամբիւղ չունի, նա ուղղակի հնոցն է գցում աւելորդ գրուածքները։ Ձարս կտրվեց — ուղղակի խմբագրին դիմեցի։

— Բարև ձեզ, պարոն խմբագիր։

— Աստուծոյ բարին ձեզ, հա, ինչ արիք։

— Ոչինչ. դուք ինչ էք անում. ինչ էք տետրակներդ քերքռում և հաշիւներ անում, ես եկել եմ ձեզնից մի քանի նիւթ խնդրելու ֆելիէտօնիս համար, ինչ կան թղթակցութեանց մէջ կամ ինչ լուրեր կան։

— Ցիրաւի, ընթերցող, խմբագիրը չատ խորասուզված էր իւր հաշուետետրների մէջ — ես դուրս գնացի իմ նիւթս հէնց Նորա դրութեան մէջ գտայ։

— Խմբագիրն իւր հաշիւներն էր տեսնում, իր ապառիկներն էր հաշվում։ Լաւ է ասում առածը, թէ չհոգի բանն, որ վատ երթայ իւր նիսխաների ետևից կ'ընկնի։ կարծեմ առհասարակ տեղական և այլ չատ խմբագրութեանց վիճակն էլ մի անանկացած չհոգի վիճակից լաւ չէ։ Երևակայիր քեզ վիճակ — 400 կամ 500 ստորագրվող և հարիւր ապառիկ կամ անառիկ — Այս երկու խօսքերն էլ մէկ է հայերէն. թէև անառիկ խօսքը սովորաբար բերդի համար են գործ դնվում — բայց այժմ աշխարհումս էլ անառիկ բերդ չկայ չնորհիւ դրամի և կրուպպեան թնդանօթների, ուստի և աւելի լաւ է այդ խօսքը գործ դնել պարտքերի համար, որովհետև այժմ բերդերից աւելի անառիկ են պարտքերը, այժմ ով է պարտք տալիս, այժմ վեքսիլով տուած պարտքերն էլ չատերը դժուարանում են ստանալու, ուր մնայ անվեքսիլ առնելիքներն, որպիսի են սովորաբար խմբագրութեանց ապառիկներն, որոնք յիրաւի անառիկ են։ Խեղճ խմբագրութիւնք — դատ բանալու էլ սովորութիւն չունին — հէնց դատի ենթարկվելու միայն դատապարտած են և և միշտ տուգանքի տակ ընկնում ու վճարում, մինչդեռ իրանցը չեն ստանում։

Շատ ողորմելի դրութեան մէջ նկարագրեցի խմբագրութիւնքը — բայց չէ, կան և՛ քաջ ու արի, բաժանորդների հախից եկող խմբագիրներ էլ, թէև դրա բացառութիւն են կազմում։

Ես յիրաւի բացառութիւն է թէ այս և թէ ամեն մասին «Մշակի» պ. խմբագիրը — որի վերայ ապառիկ մնաց բաժանորդների երկու պրեմիան — մէկը երեք հարիւր մանէթանոց և միւսը հինգ հարիւրանոց։ Չմ թէ օյին եկաւ բաժանորդներին, նոցա հախն էր — թող պռօշները լպստելով նստեն, թէ 300 կամ 500 ռուբլին իրանք պիտի տանեն, «Մշակի» անդորրագրի №-ը գայիմ պահեն, ու ուրիշ լրագիրները ձրի ուզեն։ Դըրուստն ասեմ սիրտս մի փոքր հովացաւ — ես կարծում եմ և խմբագիրները մի փոքր ուրախացան, որ նոցանից մէկն այդպէս ճարպիկ գտնուեցաւ։

Ի՞նչ խմբագրութեանց ետևից եմ ընկել, աչխարհումս այժմ կարծեմ ամեն բան անառիկ է և ապառիկ, կուզես քեզ մի քանի օրինակ ասեմ և անպատճառ քեզ կ'համոզեմ։

***

— Ասում են, որ եկեղեցական կալուածքների մի կապալառու մի քանի հայր սուրբերին և սրբազաններին վեքսիլ է տուել — նադղ դրամ ստացել է, թէ իբրև աջահամբոյր վեքսիլը չնորհել, ձիշդը չդիտեմ, մտիկ կանդնած չէի — բայց հաւանականը թէ մէկն է և թէ միւսը — այժմ վեքսիլի տերերը փողը պահանջում են. իսկ կապալառուն, ուզում են, չէ տալիս, թող դատաստանով պահանջեն, ասում է։

— Ապառիկ է, հայր սուրբիր, և անառիկ, որովհետև կուսակրօն եկեղեցականը իրաւունք չունի վեքսիլ տալ կամ առնել։ Այժմ արդէն ուշ է. պէտք է հասկանալ, որ նորա գործունէութիւնն աւելի ենթարկված է հրապարակական հսկողութեան քան մի մասնաւոր անձինը։ Մասնաւոր մարդիկ շատ կան, որ գիշերները լուսացնում են թղթախաղութեան մէջ — վատ են անում, միայն դորա ինձան առաւել իրանց է վերաբերում. բայց այդպէս չէ հասարական գործակատարի վիճակը։ Եթէ խմբագիրն անձնասուր լինի թղթախաղութեան — պարզ է, որ նա իւր լրագրին, որ հասարակաց բերան է, հասարակաց շահերի պաշտպանն է, հասարակաց դասախարակ է, չէ նուիրում բոլոր ոյժը, որով և լրագիրը չէ կարող այն ծառայութիւնն անել, որ պարտական էր գործ դնելու յօգուտ հասարակութեանց։ Մի՞թէ կարելի է այսպիսի խմբագրի թերութիւնն, որի հետևանքը հասարակաց ինձան է, քննութեան չենթարկել և չպախարակել — և պ. խմբագիրը չունի իրաւունք նեղանալու, որովհետև պարտազանց է, մի՞թէ իրաւացի է պարոք չվճարելը։ Դըպրոցի անսուէ է — եթէ սա անձնասուր լինի թղթախաղութեան կամ որ և է այլ մոլութեան այնպէս, որ գիշերներն անքուն անցկացնի — ի՞նչ պէտք է լինի միւս օր նորա հսկողութիւնն ու աշխատանքը դպրոցի

պահանջել, քանի կապալի ժամանակն անցած չէր — կամ առաջուց նադղ առնելու էր — սառուցի վերայ է գրած կապալառուի տալիքն և ձեր ստանալիքը, երբոր հայր սուրբերի ստանալիքն անապառիկ է, որոնք թէ անէծք ունին և թէ օրհնութիւն — ինչ պիտի լինի աչխարհականի հաշն ու ափսոս, որ ոչ մէկն այդ զէնքերից չունի։

***

Ո՞րքան ապառիկներ կուզես, որ չը լինի այսօր քաղաքային վարչութեան վերայ, երբ սորա վերայ ապառիկներ մնում են, ինչ կարելի է պահանջել մի սոսկական ջաղջիից։ Քաղաքային վարչութեան մէջ հարց զարթեցաւ քաղաքին մաքուր ջուր տալու համար, ինչ ճառախօսութիւններ, ասես, որ չեղան ժողովում, քաղաքի պլանը քաչվեցաւ, ջրի քանակութիւնը հաչուեցաւ, մինչև Լոնդոն հեռագիր քաչվեցաւ, էլի ջուրը վերայում կեցաւ, ժողովուրդը կեղտոտ ջրով մնաց — իսկ մաքուրը քաղաքային վարչութեան վերայ ապառիկ մնաց։

***

Զարթեցաւ նոյն ժողովում հարց քաղաքը գազով լուսաւորելու համար — կրկին ճառախօսութիւններ, հոգսեր ու մեծախօսութիւններ եղան և զանազան փորձեր տեղի ունեցան, բայց քաղաքի փողոցների լուսաւորութիւնն էլի մնաց նաւթով լուսաւորող կապալառուների ձեռքում, խաւարը թագաւորում է

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

(ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ,,ՄՇԱԿ,,)

26 Յունվարի 1880 թ.

ԱՂՑԱԽՕՏ

Ձ՝ինչքան էլ որ ուզում ես, որ ես ինձ ուրիշ տեղ գրեմ, բայց ես չեմ կարող, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ տեսնում, որ ես կարողանամ գրել։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ տեսնում, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ զգում։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ զգում, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ ճանաչում։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ ճանաչում, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ հիշում։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ հիշում, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ մտածում։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ մտածում, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում մտածել։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում մտածել, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում զգալ։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում զգալ, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում ճանաչել։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում ճանաչել, որովհետև ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում հիշել։ Ես ինձ ուրիշ տեղ չեմ կարողանում հիշել

ձանի և մինչև ո՞ր կոչմերը տարածուած լինելուն և սոյն տեղեկութեանց վրայ սրբ Էչմիածին անմիջապէս հեռագրեր ի Լօնտոն որ մի քանի հազար սաեռլինի փութով հանգանակութիւն լինելով ուղարկուի ի կ. Պոլիս: Սովելոյ կ. Պոլսոյ կեդրոնական յանձնաժողովոյ նախագահ կիւլպենկեան Սերովբէ էֆէնտիի կողմանէ Արարատեան և Պարոյսեփրաց—Արևելեան ընկերութեանց իրենց աջակցութիւնը տալու առաջարկութեան վրայ, վերոյիշեալ 2 ընկերութիւնք Վան, Ալաշկերտ, Գորճօղի (Պայազիտէ 4 ժամ հեռու.) և իշրջակայս իրենց ունեցած գործակատարներուն հրահանգ ղրկեր են որ Վանայ կեդրոնական յանձնաժողովոյ թէ հաշուական, թէ դրամական խնդիրները ամենայն ճշդութեամբ և արագութեամբ կատարեն, ցորեն բաժնելու գործողութեան հսկեն, պաշտօնէից կաշառակերութեանայսպիսի յարմար առիթներու մէջ խոչընդոտ լինին: Իրմեան Հայրիկ ս. Պատրիարք հօր կողմանէ Վանայ կեդրոնական յանձնաժողովոյ նախագահ կարգուած է և Վասպուրականի արարատեան վարժարանաց տեսուչ Փորթուգալեան էֆէնտի ալ հատանօքէն քարտուղար կը լինի այդ յանձնաժողովոյ, սիրելի է մեզ յուսալ որ ևթէ Ռուսիոյ ազգային իրենց հայրենասիրական պարտուց ճանաչողութիւնը այս անգամ ալ իգործ դնեն Թշուառութիւնը մեծապէս սիրտիս կը լինին, բաւական է որ Հայաստանեայց Վ.Կ. կաթուղիկոսը որ հազիւ 3 աւուր ճանապարհ հեռի կը գտնուի սովամահ ժողովրդէն իր բարձր հովանաւորութեան ներքև առնու նոցա ազգասիրական գործերը: Վ.Կ. սուլթանը ս. Պատրիարք հօր խնդրանաց վերայ 13000 գրուշ ցորեն ձրի բաշխել կառավարութեան չուխմարաններէն և մի քանի տարուց համար ալ աղքատ բնակիչներէ բնաւ տուրք չառնել հրամայեր է, այս ամեն դարմանները այնքան ուշ եղած են նկատելով այս տարուց ձմեռուան սաստկութիւնը և յարաբերութեանց անկարծելի դժուարութիւնը որ գարձեալ դժուարին պիտի լինի մեզ համոզուիլ. թէ գոնէ մասամբ իւիք չարամիտ կանխամտածութեանց արդիւնք չլինի իրանց ներկայ վիճակը: Երբ այսօր քաղաքակրթ աշխարհի մէջ մեծամասնութիւն կը փնտռուի իրաւունք մը յարգելու համար և փոքրամասնութեան իրաւունքը առաջուր կը կոխուի, ինչ զարմանք որ միայն կարնոյ և Վասպուրականի նահանգաց մէջ հայք թէև աննշան մեծամասնութենէ մը կազմած ժամանակ՝ անտեսանելե ձեռքեր զվասպուրական զուրկ այդպիսի մեծամասնութիւն մը ցոյց տալու համար չանքեր չընեն: „Մեղուի“ ընթերցողք պէտք է յիշեն որ դեռ երկու ամիս հապիւ կայ երբ Դուռը բաղէշի յաստուկ կուսակալ մը կարգեց, Վանայ կուսակալութեան հարաւային արևմտեան հայաբնակ սանճաքները բաժնելով և բաղէշի կուսակալութիւնը կազմելով, որպէս զի Հայաստանի քիւրտք և Վասպուրականի վանայ վիլայէթի մէջ մեծամասնութիւն կազմած լինին: Պատերազմ, սով, սրածութիւն, աշխարհագրական բաժանումնք, հարստահարութիւնք, աքսոր, բանտարկելութիւն ամենքն ալ արդար միջոցներ են կառավարութեան մը համար որոյ միակ նպատակն է քրիստոնեայ տարրը իր նուաստ սարկական և իսլամ տարրը իր բարձր տիրապետական վիճակին մէջ պահել, ահա նշանաբան մը որոյ գործակիրք կրնան փոխուիլ բայց ինք չփոխուիր: Սովատանջ ժողովրդեան մը ապիրատ տէսարանայ թերևս չափէն աւելի հանդիսատես լինելէ յետոյ ներսի մէկ պահ մ՚ալ մի քանի խօսք ըսել մայրաքաղաքիս ձմեռնայինն դարձեալ բարեգործական երկութիւնից մասին որք պարբերաբար տեղի կ՚ունենան այս եղանակիս մէջ: Արական սեռի օրինակին հետևողք Պարոյսեփր—Հայրենեաց ընկերութիւնը ազգային հանդիսից առաջին տուաւ այս տարի, նա որ անճանօթ էր երեկ այսօր թէ իր վրայ գործերովը և թէ նախապատրաստական աշխատութիւններովը հանրածանօթ եղաւ: Նախապատրաստական աշխատութենանց ամենէն արդիւնաւորը պէտք է համարել յունուար 12/29 երեկոյ Բերա վէրտքի Թատրոնին մէջ Անգլիոյ դեսպանուհւոյ տիկին Էվարտի հովանաւորութենանը ներքև տուած պարահանդէսը: Հանդէսը սկսաւ ժամը 10-ին, սրահները լի էին բազմութեամբ, օթեականները նոյնպէսլի, դեսպանուհւոյն յատկացեալ մէջտեղի օթեակին մէջ Անգլիոյ ընդհանուր հիւպատոս պարոն Ֆավսէթ և իր տիկինը բազմած էին, դեսպանը և դեսպանակին իրենց սգաւորութեան պատճառաւ չկարենալով ներկայ գտնուիլ: Դիմակաւոր և անդիմակ պարահանդիսի մը շքեղութեան համար ոչ ինչ պակաս էր, մեծ լուսաւորութիւն, գեղեցիկ և ներդաշնակ երաժշտութիւն, ընտիր ընկերութիւն հոն միացեալ էին կարգադիր յանձնաժողովոյ ակնայք և իրանց անձնուէր գործակատար Միսաքեան էֆէնտին հանուրց շնորհակալութեան արժանի են իրենց անդուլ աշխատանաց համար երբ մտաբերենք թէ Թուրքիոյ գրամական այլպիսի տագնապալից ժամանակի մը մէջ և 10—15 ազգային կամ օտար բարեգործական նպատակով պատրաստուած հանդիսից մէջ, յաջողեցան դարձեալ 500 օսման. ոսկւոյ մօտ գուտ հասոյթ արտադրել աղջկանց դաստիարակութեան նպաստելու և գաւառաց վարժուհիներ պատրաստելու նպատակ ունեցող իգական ընկերութեան մը համար: Վասպուրականի սովոյն հետ օրուան խնդիր մը գարձաւ ընկերութեան միութեան գործը, մեծ, պզտիկ, հարուստ, ազքատ, աշխարհական, եկեղեցական, այր, կին, մէկ հարցում մը միայն ունին խօսակցութեանց մէջ ժամ թիւն եղաւ թէ ոչ. ոչի կոմիտակիցք ուր որ ալ լինին, ձամբան թէ գործատուն, ընտանեաց կամ պանդոկի մէջ, շոգենաւի կամ թրամվայի մէջ կսկսի անմիջապէս վիճաբանութիւն բանալ ընկերութեան ներկայ անդամից կամ նոյն իսկ իրենց մէջ և խնդրոյն վերջաւորութեան կողմերը երկարօրէն կպատասխանեն, այսպէս կողմնակիցք ալ իրենց հակառակորդաց ընթացքէն ամենևին . չյուսահատած, իսկոյն պատճառաբանութեանց վերայ հիմնել ձառախօսութիւն մը կսկսին և հարիւրին յիսուն ոչ մէկ կողմ վիրաւ համոզելով կը բաժնուին իրարմէ միւս անգամ տեսակցելու խոստմամբ: Յունուար 20 նշանաւոր թուական մը եղաւ այս վեցամսեայ անվերջանալի խնդրոյն նկատմամբ: Երկք ընկերութեանց ներկայացուցիչներու երկար քննութեանց և համաձայնութեանց արդիւնք ներկայացուիլ միութեան ծրագիրը նախապէս անձնիւր անդամից յանձնաժողովութեան ղրկուած էր, առաջին ժողովը Արարատեան ընկերութիւնը պիտի անէր այ՛ կամ ոչ քուէն տալու համար, ժողովականաց բազմութիւնը էր բաւէր սրահին մէջ, ներկայ էին դիւանի և գործակիր ժողովոյ և յանձնաժողովոյ բոլոր անդամք, Պարոյսեփրաց-Արևելեան և Սիսիկեան ընկերութեանց դիւանները և վարչական ժողովները, ամեն ոք ենթագրած էր թէ վիճաբանութիւնները շատ ջերմ և հետաքրքրական պիտի լինին և հետևանքը անսպասդ կը կարծուէր: Ամանը բացուեցաւ և առենապետ Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտի յառաջ քան օրակարգին անցնելու նախորդ ընդհանուր ժողովոյ որոշմամբ Արարատեան ընկերութեան ի Հայաստան պատուիրակ Վասիլեան էֆէնտիի իւր անձնուէր աշխատութենանց իբր դոյզն յիշատակ մը յանուն Արարատեան ընկերութեան ոսկի շղթայով ընտիր ոսկի ժամացոյց մը մատոյց վրան գրուած իւր անունը և միջը ալ «Նուէր Արարատեան ընկերութենան». ժողովը առենապետին բերնով կրկին իւր շնորհակալութիւնները յայտնել յետոյ անմիջապէս միութեան խնդրոյն անցաւ: Թղթակցութեան անձուկ սահման պիտի չը ներէ մեզ մանրամասն խօսել, թերևս ուրիշ առթիւ սոյն նոտին հետաքրքրական մասերը կարելի լինի հաղորդել մեր ընթերցողաց, միայն այսքանը ի գիտութիւն հասարակաց հարկ է գրուցել, թէ 4 ժամ անընդհատ թեր ու դեմ լուրջ վիճաբանութենէ յետոյ յորում շատ մը ատենաբանից խօսելու կարգ անգամ չեղաւ և ժողովականք զանազան կողմերէ քուէ՛ քուէ՛ սկսան աղաղակել, անդամից չորս հինգերորդի ստուար մեծամասնութեամբ երեք ընկերութեանց միութեան ըստ կրզբունքը քուէարկուեցաւ, պայմանները և մանրամասնութիւնքը 2 շաբաթէ յետոյ դումարելի ընդհանուր ժողովոյ մէջ: Ցոյս կայ թէ Արարատեան ընկերութեան որոշումը իւր օգտակար ազդեցութիւնը ունենայ միւս երկու ընկերութեանց ընդհանուր ժողովներուն վրայ որք վաղը կիրակի միութեան խնդրով պիտի գբաղին:

Ա. Բ-ԵԱՆ.

ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ահա եօթը տարի է, որ Թիֆլիզի բնանկիչները և մանաւանդ արհեստաւորները անհամբերութեամբ սպասում են Մի քայելեան արհեստաւորաց ուսումնարանի բացուելուն:

Ներկայ տարուայ յունվարի 14-ին Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը հազորդեց իրաւասուների ժողովին, որ ուսումնարանի չինութիւնը կատարելապէս վերջացած է և առաջարկեց կանոնադրութիւնը, ուսման նախագիծը և ըստատը: Իրաւասուների ժողովը մի անհրաժեշտ յօդուած աւելացնելով կանոնադրութենանը, պ. Իրաւասու Իզմայլեանցի առաջարկութեամբ, այն է, որ բոլոր առարկայք պէտք է աւանդուին ռուսներին համար ռուսերէն, հայերի համար հայերէն և վրացիների համար վրացերէն մեացածը դրեթէ անփոփոխ միաձայն հաստատեց: Այս վճռի հիման վրայ ներկայ 1880 տարուայ սեպտեմբերի 1ին կբացուի այդ ուսումնարանը:

Շնորհաւորելով Թիֆլիզեցոց այս նշանաւոր վճիռը, որ պէտք է մեծ դարկ տայ թէ նորա բնակիչների բարոյական և թէ նիւթական բարեկեցութենանը, պարտք ենք համարում մի քանի կարևոր տեղեկութիւններ հաղորդել, որ նոցա համար, որոնք կ՚ցանկանան տալ իրանց որդոցը այս ուսումնարանը, այս գործը թեթևանայ:

Մէքայելեան արհեստաւորաց ուսումնարան մանելու պայմանները և հարկաւոր պիտեվքը.

Այս ուսումնարան կարող են մանել ամեն դասանութեան և ամեն դասակարգի երեխայք:

Մանողը պէտք է լինի առողջակազմ, նորա հասակը չպէտք է լինի 12 տարուց պակաս և 16 տարուց աւելի:

Ընդունելութեան քննութիւնները լինում են իւրաքանչիւր տարուայ օգոստոսի 25ից մինչև սեպտեմբերի 1ը:

Ամեն տարի սեպտեմբերի 1ին սկըսվում է ուսումը:

Մանել ցանկացողները պէտք է օգոստոսի 20ին գրաւոր խնդիրք տան ուսումնարանի դիրեկտորին, այս խնդիրքի հետ պէտք է ներկայացնեն. 1) ծննդեան և մկրտութեան վկայականը, 2) ծադիկ կարելու վկայականը:

Բացի 1 դասատունը ցանկացողք կարող են մանել և II դասատուն եթէ նոցա գիտութիւնը համապատասխան է I դասատան նախագծին:

Առաջին դասատուն մանելու համար պահանջվում են հետևեալ գիտութիւնք.

Կրօնագիտութիւնից. համառօտ քրիստոնէական և համառօտ սրբազան պատմութիւնք (իւրաքանչիւր ազգի երեխային իւրեանց լեզուով և իւրեանց դաւանութեան):

Ռուսաց լեզուից. կարդալ, գրել և կարդացածը պատմել: Բոլոր մանողներից:

Հայոց և վրացոց լեզուներից. հայերը հայերէն կարդալ, գրել և կարդացածը պատմել, վրացիները վրացերէն:

Թուաբանութիւնից. առաջին չորս գործողութիւնները, մաւոր լուծումն պարզ խնդիրների:

Երկրորդ դասատուն մանելու համար պահանջվում են հետևեալ գիտելիք ըստ նախագծի 1 դասատան:

Կրօնագիտութիւնից. աղօթքներ և պատմութիւն հին և նոր կտակարանների:

Ռուսաց լեզուից. կարդալ, գրել թելադրութեամբ, կարդացածի պատմելը: Բառերի որոշումը, որոնք նշանակում են առարկայք, առարկայի որպիսութիւնը, գործողութիւնը և գործողութեան եղանակը: Անգիր մի քանի առակներ և ոտանաւորներ:

Հայերէնից. հայերից պահանջվում է նոյնքան որքան ռուսերէնից:

Վրացերէնից. վրացիներից նոյնքան որքան ռուսերէնից:

Թուաբանութիւնից. առաջին չորս գործողութիւնները, մաւոր լուծումն պարզ խնդիրների:

Երրորդ դասատուն մանելու համար պահանջվում են հետևեալ գիտելիք ըստ նախագծի 2 դասատան:

Կրօնագիտութիւնից. աստուածաշունչ պատմութիւն հին և նոր կտակարանների:

Ռուսաց լեզուից. կարդալ, գրել և կարդացածը պատմել, գրել թելադրութեամբ, քերականութիւն ռուսերէն լեզուի ետիմոլոգիական և սինտաքսական մասերը:

Հայոց և վրացոց լեզուներից. հայերը հայերէն կարդալ, գրել և կարդացածը պատմել, վրացիները վրացերէն:

Թուաբանութիւնից. առաջին չորս գործողութիւնները ամբողջ թուերի վերայ և մասերի վերայ, անուանական թիւեր, գործողութիւն վաճառականական հաշուեսախտակի:

Նկարչութենից և վայելչագրութենից. տարերք տառերի և թուանշանների բառերի ու կարճ նախադասութիւնների գրելը. գծերի և երկրաչափական ձեւերի նկարագրելը:

Գծագրութենից և աշխարհագրութենից. սկզբնական վարժութիւններ մատիտով, ծանօթութիւն գործիքների հետ. գծագրելը գծերի, շրջանների, անկիւնների և ուղղագիծ մարմինների (կանոնաւորների) և անկանոնների, երկարութեան չափերը, տեղեկութիւն մաշտաբի:

Բնական պատմութենից. տեղեկութիւն մի քանի կենդանիների, բոյսերի և հանքերի վերայ և այլն:

Ձգնաւորների այս վճիռը արդէն ուղարկուած է բարձրագոյն կառավարութենանը հաստատելու համար, որ անկասկած չուտով կլինի: Գալոց մրանելու խնդիրները կ՚սկսվին ընդունել օգոստոս ամսի սկզբից: Ի նկատի ունենալով, որ կոնսիստորիայն չատ զբաղուած լինելով գործերով չուտով չէ կարող տալ խնդրողներին հարկաւոր մատրիկանը, խորհուրդ ենք տալիս նոցա, որոնք կամենում են մանել այդ ուսումնարան, այժմէն իսկ հոգալ այդ հարկաւոր վկայականը ստանալու համար:

Ջենք կասկածում, որ վիճակաւոր իշխանութիւնը իր կողմից խստիւ չկարգադրէ, որ ցանկացողներին առանց յետաձգելու տան պահանջած վկայականները:

Մի և նոյն նստի մէջ իրաւասուների ժողովը վճռեց մարտի 1ին բանալ նոյն իսկ արհեստաւորաց ուսումնարանի չինուածների մէջ մի սկզբնական վարժատուն, որ պէտք է ունենայ 3 դասընթաց դասատուններ, մինը ռուս, մինը հայ և մինը վրացի երեխանց համար, նշանակելով դոցա համար ծախս տարեկան 2600 ռուբլի:

Աստուած տայ որ իրաւասուների ժողովը չատ այսպիսի արդիւնաւոր նիստեր ունենայ:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հայաստանի սովատանջ ազգայնոց օգնութեան համար այս չաբթու 500 լիրա ղրկուեցաւ ի Վան, և լսածնուս նայելով, յառաջիկայ չաբթու ալ նոր 500 լիրա մը ղրկուելու ջանք կայ:

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ մայրաքաղաքիս Անգղիական դեսպան Վ.սեմ. Սըր Հ. Լէյարտ, կարնոյ Անգղիական հիւպատոս Թրօթթըր հաղարապետին առաջարկութեան համեմատ՝ որոշեր էհեռագրել ի Լոնտրա առ Լորտ Պիքոնսֆիլտ, և անյապաղ հանգանակութեամբ առ նուազն 8000 լիրա հասցնելու տարկը յայտնել Նորին Վսեմութեան:

Անշուշտ հեռագիրն արդէն քաշուած է, և կը սիրեմք յուսալ որ անգղիական մեծ և մարդասէր ազգին օգնութիւնը չը յապաղեր մեր սովատանջ դժբաղդ եղբարց հասնիլ, և սպառնացիալ աղետին առաջն առնուլ:

(Մասիս)

***

— Երէկ ժամ ութին միջոցները Թէրճէմանը էֆէնտիի արտօնատէր Սազայեան էֆէնտին և անօրէն Տիգրան ձիվէլեկեան էֆէնտին հարցաքննիչ դատաւորին կողմանէ կանչուելով հարցաքննութեան ենթարկուեցան: Ինչ ինչ հարցումներէ ետև, որոց պէտք եղած պատասխանները արուեցան մեր պաշտօնակցաց կողմանէ, հարցաքննիչ դատաւորն հրաման ըրաւ որ այս երկու ձերբակալեալք բանտէն արձակուին երաշխաւոր առնուելով. և գոհութեամբ կը ծանուցանենք թէ արդարև երէկ իրի-

կուն ուշ ատեն թէրմէմանը էֆքեարի արտօնատէրն ու տնօրէնն երաչխաւոր տալով բանտէն արձակուեցան յուրախութիւն բազմաթիւ բարեկամաց, որք անոնց բանտարկութենէն ի վեր չէին դադրած այցելութիւն տալէ ոստիկանութեան բանտը։

«Մասիս»

***

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. այստեղ սաստիկ թանգութիւն կայ, ալիւրի փութը արժէ 4 ռուբլի, բազմաթիւ աղքատներ կան, մանաւանդ ալեւկերացի գաղթականները մեծ թշուառութեան մէջ են։ Թեմական առաջնորդ գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանը՝ այս թշուառներին փոքր ինչ սփոփելու համար՝ մի սրտայոյզ քարոզ խօսելուց յետոյ՝ բոլոր ժողովուրդեանը ի ժողով է հրաւիրել, անմիջապէս մի յանձնաժողով կազմել և ինքն յօրինակ այլոց իսկոյն մի գումար նուիրել։ Ժողովուրդը հետևելով իւր սիրելի առաջնորդի խօսքին ու գործքին՝ մի չաբթուան մէջ հանգանակութեան գումարը հասցրել է մինչև 2000 ռ. և դեռ յոյս է տալիս գոնէ 3000-ի հասցնելու։

***

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են հետևեալները.

ԱԽԱԼՑԽՈՑ Ս. Փրկիչ եկեղեցւոյն գիւղերը Ս. Էջմիածնի կարգադրութեամբ յանձնուած է Խորէն Ալագ քահանայ Բարսեղեանցին։— Սինօղի Թղմից ոչինչ չէ երևում թէ կապալառ է տրուած թէ առանց կապալի իբրև հաւատարմատարի։— Տեղական ժողովուրդը չատ ցաւելով մի այդպիսի կարգադրութեան վերայ, որոշեց հրեք պատգամաւոր ուղարկել Վեհափառին այդ և այդ կալուածոց վերաբերեալ մի քանի մութ հարցեր պարզելու համար։— Երբ այդ պատգամաւորութիւնը իւր գործը վերջացնէ մենք մի երկար յօդուած նուիրելու ենք այդ կենսական հարցին, միայն հոգով կցանկանայինք որ վեհափառ հօր մօտ գնացած պատգամաւորութիւնը և նորա առաջարկութիւններն ու խնդրուածքները չենթարկուէին այն վիճակին, որին ենթարկուեցան 1876 թուականին պատգամաւորները սրբազան առաջնորդից։—

— Ի յիշատակ Նորին կայսերական Մեծութեան 25 ամեայ թագաւորութեան քաղաքային խորհրդարանը որոշեց 3 որդեգիրներ ուղարկել արուեստների հետևներ սովորելու, այն պայմանաւ որ դրքա վերադառնալով ուսուցչութիւն անեն տեղական արհեստանոցում, որը և այն ժամանակ բանալու է քաղաքը։—

— Երկու տարուց աւելի է որ տեղական ուսումնարանների հոգաբարձութիւնը կոնսիստորիայի մէջ հարց էր զարթեցրած ուսումնարանները կարկատել (դրքա փուլ գալու մօտ են) և դորա համար խնդրուած էր մի մասը այն եկեղեցական գումարի որը բանկումն է։— վերջին օրերումս Սինօղից գրել են պատրաստի փողին ձեռք չտալ, այլ ժողովրդից հանգանակութեամբ փող հաւաքել և ուսումնարանները կարկատել։— Չար լեզուները ասում են որ պատրաստի փողին ձեռք չտալ, նշանակում է պատրաստի փող չկայ։— Ես այդ բանին չեմ հաւատում, Աղաջանեան հայր Սարդիս քահանան այստեղ չէ, որ ճիշդը իմանայի։—

— Քաղաքային խորհրդարանի կողմից նշանակած էր մի յանձնաժողով սորանից մի ամիս առաջ որպէս զի իրեն յանձնուած 3000 ռ. քաղաքական գումարով ալիւր ձեռք բերէ և չունեցողներին նստած գնով վաճառէ։— Այդ յանձնաժողովի կարգադրութեամբ հասարակաց կշեռքի մօտ այժմ մշտ ալիւրի պարկեր դիզուած են և հասարակութիւնը անխտիր ունեոր և չունեոր գնում են։— Տեղական տաճիկները (գաւառի) այդ բանը տեսնելով միշտ իջեցնում են իւրեանց ալրանքի գինը, այնպէս որ մի ամսուայ մէջ 2 ռ. 40—50 կ. տեղական ալիւրի գինը իջաւ մինչև 1 ռուբլի 60 և 80 կոպէկ։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

„ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ“

Վերնագրով վեցամսեայ պատկերազարդ հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպագրուեցաւ և այս օրերումս կուզարկուի պատուելի բաժանորդաց։ Այս տետրիս մէջ տպուած կան 36 պատկեր, յորոց 12-ն ազգային են։ Բաժանորդութեան 1880 ամի երկու տետրակաց գինն է 2 ռուբլի. իսկ առանձին տանձին գնողների համար իւրաքանչիւր տետրի գինն է 1 ռ. 50 կ. հանդերձ առաքմամբ։

Հրատարակիչ Գ. Մոեբէանց։

2—3

„ԱՆԵԿԴՕՏՆԵՐ“-ի III Հատորի համար միայն 300 անեկդօտ ունենալով պատրաստի դեռ ևս շարունակում ենք անեկդօտներ ժողովելը։ Յանկանալով, որ այդ հատորը վերջինը լինի, կամենում ենք վերնոյն ժամանակը, որ նա առաւել հարուստ և ընտիր բովանդակութիւն ունենայ, քան իւր նախորդ հատորները։ Ուստի, այն անձանց, որոնք կարող են մեզ անեկդօտներ ուղարկել, խնդրում ենք, որ չը պանան մեզ իւրեանց օժանդակութիւնը։ Մեզ անեկդօտներ ուղարկողների ազգանունները կը տպագրուին դրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կը ստանայ մի օրինակ։—Մեր հասցէն.

„Въ Тифлисъ. (Авлабаръ) Ивану Петровичу Назаріанцъ“.

Յ. Նազարեանց։

4—10

ԹՒՓԼԻՍԻ ՓԱՂԱՓԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակաց պիտութեան համար որ Ռուսաց բազարում և Էալալարի հրապարակի վերայ նա շինել է տուած խանութներ վարձով տալու համար։ Ռուսաց բազարում 18, իսկ Էալալարի հրապարակում 40 համար։ Ուստի և այն խանութները վարձել ուզողներին հրաւիրում է քաղաքային վարչութեան կանցելարիան, որ ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետ կ՚յայտնվին վարձելու պայմանները։

2—3

ԼՈՅՏ ՏԵՍԱԻ

„ՓՈՐՁ“
ԱՄՍԱԳՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐԻ (I) ՀԱՄԱՐԸ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. I. Համառօտ տեսութիւն հայ պատմական գրականութեան պրօֆեսօր Ք. Պատկանեան։ 2. Ես նշանած էի, վէպ. Միքայէլ Վայէլեան 3. Սեթիանոս Նազարեանց և նորա գրականական գործունէութիւնը. Ա. Երիցեան։ 4. Կրքերի ազդեցութիւնը մարդուս առողջութեան վրայ. հրապարասխօսութիւն Ա. Բաբայեանի 5. Ներուկ վանեցի, բան. Գամառ-Քաթիպայի 6. Անգլիացւոց արչաւանքը Աֆղանստանում. (Edinburgh Review). ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 7. «Խօսք զհայրենեացս» հրապարակական դասախօսութիւն Պարտիզակցի վ.ահան վարդապետի, կ. Պօլիս 1873. Գրիչ։ 8. Երկու պատկեր, բանաստեղծութիւն Գամառ-Քաթիպայի. 9. Ձանապարհորդութեան տպաւորութիւններ, Սիւլիւկ։ 10. + Ա. Դ Մօրդման. Ա. Ե. 11 Հրաւէր։ 12 Յուցակ նուիրատուաց յօգուտ Պարոցաւորաց-Արևելեան ընկերութեան։ ՅԱՒԵԼՈՒԱԾ։ 13. Հայ պատմագրների երկասիրութեանց ցուցակը. պրօֆեսօր Ք. Պատկանեան։ 14. Յայտարարութիւններ։

Ստորագրուել կարելի է Տփխիսում «փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով. — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ».

Խմբագիր—հրատարակիչ
Աբգար Յովհաննիսեան։

2—3

Բժիշկ Բ. Նաւասարդեանի «Փիլիսոփրիա» կամ «փոզացու» դրքոյկը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, կենդրոնական գրավաճառանոցում և Յ. Դրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցում։ Գինն է 25 կոպէկ—բարեդործական նպատակով։

6—10

ՄՕ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ այս տարի աւարտել է մրցանակով Թէոդոսիայի իգական գիմնազիոնը, ցանկանում է ուսուցչուհու պաշտօն ստանալ (գլխաւորապէս ռուսաց լեզուից և մաթիմաթիքայից) մի հայ օրիորդական դպրոցում։ Պայմանները խնդրում է ուղարկել այս հասցէով С. Петербургъ, въ армянскую церковь, священнику Хантарджянцъ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

կեդրոնական գրավաճառանոցում, իշխան Մ. Բէհբութեանի հետևեալ թատրոնական հրատարակութիւնները։

Ա, Վ՞ոյ քի իմ վէչէր. Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ. 40 կ.
Բ, Բէհքեր Բիճու Հանաք, օպերետայ մի գործողութեամբ . 25 կ.
Գ, Աչնանային երեկոյ գիւղումը, վոդեվիլ մէկ արարուածով 25 կ.
Դ, Բռնի ամուսնութիւն, կոմիդիայ մէկ արարուածով . 40 կ.
Ե, Ֆանօ և Ֆանէտա, օպերա-վոդեվիլ մէկ արարուածով . 40 կ.
Զ, Պառաւներուն խրատ, մէկ արարուածով Մ Տ. Գ. . 50 կ.
Լ, Տիկինը նրան սպասուհի, կատակերգութիւն մէկ արարուածով 30 կ.
Ը, Անուն կատակ, կատակերգութիւն մէկ արարուածով 40 կ.
Թ, Փակուած դրան մօտ պատկեր-մենախօսութիւն մի ար. . 30 կ.

Պ. Գ. Սունդուկեանի Պէպօ կոմեդիան երեք գործ. . 30 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, ռուսերէն և օտար լեզուներն, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, ռուսերէն և գաղիերէն վիպասանութիւններ, ամեն հասակի համար ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ դրքեր։ Պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ, օտարաքաղաքացիք իրանց պատուէրները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով. « въ Тифлисъ, въ Центральную книжную торговлю».

5—10

ВЫШЛА ИЗЪ ПЕЧАТИ БРОШЮРА: „ЭКОНОМИЧЕСКІЕ ОЧЕРКИ ЭРИВАНСКОЙ ГУБЕРНІИ и ОЗЕРО ГОКЧА“. Продается во всѣхъ книж. магазинахъ Тифлиса по одному рублю за экземпляръ. Иногородные адресуютъ свои требованія: Тифлисъ, въ «Кавказскую книжную торговлю», Захарію Петровичу Грикурову.

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ՝ „ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ և ԳԵՕԿՉԱ ԼԻՃ“ անունով ռուսերէն գրքոյկը։ Վաճառվում է Տփխիսի բոլոր գրավաճառների մօտ. գինն է մի ռուբլի հասը. արվելիքը յօգուտ „Արարատեան ընկերութեան“։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Въ Тифлисъ, въ „Кавказскую книж. торговлю“, Захарію Петровичу Грикурову. 5—5

ՏՊԱԳՈՒԱԾ Է
„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ ԼՐԱԳՐԻՆ

Բաժանորդ գրուել ցանկացողները թող բարեհաճին դառնալու առ պ. Պարոյր Կ. Պօլսում Գալաթա, մաքսատան դիմացը Կէօչէ Օղլու խանը թիւ 12 — 13։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 8-го ФЕВРАЛЯ 1880 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К-о

Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց։